ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
info@araratbank.am
Հաշվետվություն թիվ 08, 03.06.2026թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 29.05.2026թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-22/05Լ**) ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-22/05L
Դաս: ՀՊ
«29» մայիսի 2026թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21[6]-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «ը», «թ» կետերը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1. կետի «բ», «ը», «թ» ենթակետերը՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողովը հրավիրել 2026 թվականի հունիսի 24-ին ժամը 16:00-ին, 0001, Երևան Աբովյան փողոց, 14 շենք հասցեում գտնվող «Գրանդ Հոթել Երևան» հյուրանոցի «The Grand Conservatory» դահլիճում:
2. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օր սահմանել 2026 թվականի մայիսի 29-ը:
3. Նախնական հաստատել և ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ 2025 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն Հավելված 1-ի:
4. Բանկի տարեկան ընդհանուր ժողովին ներկայացնել շահույթի բաշխման առաջարկություն՝ համաձայն Հավելված 2-ի:
5. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողովի օրակարգը՝ համաձայն Հավելված 3-ի:
6. Հաստատել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը՝ համաձայն Հավելված 4-ի:
7. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերի 2026 թվականի տարեկան ընդհանուր ժողով հրավիրելու մասին բաժնետերերին ծանուցել պատվիրված նամակներ ուղարկելու միջոցով՝ համաձայն Հավելված 5-ի:

8. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ բաժնետերերին տեղեկացնել, որ սույն որոշման 6-րդ կետով հաստատված ցանկում ընդգրկված նյութերին կարող են ծանոթանալ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ վարչական շենքում (ք.Երևան, Բուզանդի փողոց, 87-րդ շենք, թիվ 85), ինչպես նաև համացանցի Բանկի տնային էջում (www.araratbank.am):
9. Հաստատել օրակարգի հարցերի վերաբերյալ քվեաթերթիկի ձևը՝ համաձայն Հավելված 6-ի:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK OJSC • ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՕԱՕ • 02500518